**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 3

**18 հունիսի 2019 թվականի**

## Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության նորմատիվները հաստատելու մասին

Լսելով և քննարկելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության նորմատիվները հաստատելու և գիտական խորհրդի՝ 2019 թվականի ապրիլի 30-ի որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը (զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյան), գիտական խորհուրդը

**ՈՐՈՇՈՒՄ Է.**

1. Հաստատել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հետևյալ նորմատիվները.

| | **Պաշտոնը, գիտական կոչումը** | **Նորմատիվները** |
|---|---|---|
| **1.** | | |
| | Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր | 700-800 |
| | Ամբիոնի վարիչ, դոցենտ | 700-800 |
| | Ամբիոնի պրոֆեսոր | 720-800 |
| | Ամբիոնի դոցենտ | 740-820 |
| | Ամբիոնի ասիստենտ | 760-850 |
| | Ամբիոնի դասախոս | 800-900 |
| **2.** | **Համատեղությամբ աշխատող դասախոսների համար** | |
| | Ամբիոնի պրոֆեսոր 0,25 | 180-200 |
| | Ամբիոնի պրոֆեսոր 0,50 | 360-400 |
| | Ամբիոնի դոցենտ 0,25 | 200-220 |
| | Ամբիոնի դոցենտ 0,50 | 400-440 |
| | Ամբիոնի ասիստենտ 0,25 | 220-240 |
| | Ամբիոնի ասիստենտ 0,50 | 420-460 |
| | Ամբիոնի դասախոս 0,25 | 250-270 |
| | Ամբիոնի դասախոս 0,50 | 450-490 |

| | | |
|---|---|---|
| **3.** | **Դասախոսական կազմի յուրաքանչյուր անդամի համար** | |
| | Լսարանային ժամեր 1,0 | 350 |
| | Աբիոնի վարիչի լսարանային ժամեր 1,0 | 250 |
| **4.** | **Այլ կատեգորիաներ** | |
| | Մագիստրոսական ծրագրի ղեկավար | 50 |
| | Գիտական խորհրդին կից հանձնաժողովի անդամ | 50 |
| | Ֆակուլտետի խորհրդի անդամ | 30 |

**2.** Հաստատել ժամավճարային կարգով դասավանդման հետևյալ ժամային դրույքաչափերը.

| | | **Ժամային դրույքաչափը** |
|---|---|---|
| **1.** | **Դասախոսական կազմի բոլոր անդամների համար** | |
| | Լսարանային մեկ ժամը | 4500 ՀՀ դրամ |
| | Արտալսարանային մեկ ժամը | 2000 ՀՀ դրամ |

**3.** Դասախոսական կազմի անհատական բեռնվածությունները, անկախ կիսամյակային բաշխվածությունից, հաշվարկել լսարանային ժամերի հանրագումարով:

**4.** Ուժը կորցրած ճանաչել գիտական խորհրդի 2019 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության նորմատիվները հաստատելու մասին» որոշումը:

**5.** Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Դ.Ռ.Գալոյանին:

**6.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019-2020 ուսումնական տարվանից:

**Գիտական խորհրդի նախագահ՝** **Ռ. Ա. Հայրապետյան**

2019 թ. հունիսի 18

Երևան